Եւ առաւօտուս Բշի (25 Փեբր.) զինուք էին ամենեքեան և մինչև յերեք ժամն ժողովեցան միաբան, և անտի ելեալ գիմեցին ի պալատն, և յերեկեան զօրագլուխքն կրկին խօսին ընդ թագաւորին բազումս եւ զտէֆտէրի գրեալ մարդիքն ուզեն. եւ որք անդ գտանէին տղայոց թագաւորին՝ նոքա եւս ակնարկեն առ զօրսն. Պինդ կացէ՛ք։ Եւ սոքա անպատճառ աղաղակեն և ասեն թէ Դոքա են որ փճացուցին զքո թագաւորութիւնդ. առաքեա՛ առ մեզ անպատճառ։ Եւ թագաւորն՝ զմուսահիպ Իւսուֆ աղան ինձ բաշխել պիտիք, աղաչեմ զձեզ. եւ սոքա աղաղակեալ թէ Ոչ լիցի բանդ։ Եւ Զուռնազանն ի ներսն էր մօտ առ թագաւորն հանդերձ մեծամեծօք. յայնժամ զօրացն ձայնէ թէ Սուս եղի՛ք, այն հերիք որ կանչեցիք. իբր թէ հաճելով զկամս թագաւորին։ Յայնժամ և զօրացն ասացեալ թագաւորին թէ Արքա՛յ, մի մեծ վէքիլդ այդ չէ՞ր որ գնացեալ զափուտան անունով ի վերայ Հայուն եւ ջարդել եւ զՏաճիկսն Հայուն եւ ինքն փախաւ. եւ ընդ ի նա կողմն հայելով ասեն թէ Զքեզ այլ կ'ուզեմք ի թագաւորէն, բաւական եղև որ դուք այսչափ թագաւորութիւն քշեցիք. և նա յետս յետս չոգալով երթայր երեսաց զօրացն, եւ թագաւորն զայս ունկն դնէր։ Եւ ճար ոչ գտեալ արքային՝ խեղդամահ արար զերկու սեաւքն՝ զմուհասիպ Իւսուֆ աղան և զՃօրճօ կոչեցեալ վալիտէ աղասին՝ հիանալի և անտեսանելի գէր եւ գխաստատպաշին, ի պալատի պարիսպն ի վայր իջուցեալ. նոցին եւս պարան յոտն քարշեալ և բերեալ յայնմ ծառի՝ եւս զնոսա կախեցին եւ զգէշս նոցին առաջին[1]) գիշոցն նմանեցուցեալ, պատառ պատառ և կտոր կտոր ի վերայ դանկիցն զարկեալ՝ առեալ գնային, որ և գնշմարանքն երևիւր ա-

1) առաջի.